ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №481Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի նոյեմբերի 26-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնմեկ ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Էներջի էս ջի էյ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №481Ա որոշմամբ «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ԼԷ №0660 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №175Ա որոշմամբ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված էլեկտրական

էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0660 լիցենզիայով ամրագրված «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, որոշման մեջ «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի նոյեմբերի 25-ը» բառերով, իսկ «մինչև 2041 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը՝ «մինչև 2042 թվականի նոյեմբերի 25-ը» բառերով:

2. «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի մայիսի 26-ի №1982/10/5 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված №21-0116 երաշխիքի համաձայն երաշխավորված 12 025 000 (տասներկու միլիոն քսանհինգ հազար) դրամ գումարից 6 012 500 (վեց միլիոն տասներկու հազար հինգ հարյուր) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 12 025 000 (տասներկու միլիոն քսանհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի հունվարի 9-ը գործողության ժամկետով:
3. «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 15-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի 3–րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը 2022 թվականի նոյեմբերի 1-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում կկիրառվի այլ սակագնային կարգավորում:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.